Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝ https://grqaser.org/hy/donate

Ռուս գրականություն, Արձակ, Պատմվածք 13+

Անտոն Չեխով

Հաղթողի ցնծությունը

Պաշտոնաթող կոլեժսկի ռեգիստրատորի պատմածը

Բարեկենդանի ուրբաթ օրը խմբով գնացինք Ալեքսեյ Իվանիչ Կոզուլինի մոտ՝ բլիթ ուտելու: Դուք Կոզուլինին չեք ճանաչում. ձեզ համար նա, գուցե, ոչնչություն է, զրո, սակայն մեզ նմանների՝ երկնքից աստղեր վայր չբերող մարդկանց համար նա մեծություն է, ամենազոր, իմաստուն: Նրան այցի գնացին բոլորը, որոնք կազմում էին նրա, այսպես ասած, պատվանդանը: Հորս հետ գնացի նաև ես:

Բլիթները այնպես հոյակապ էին, որ արտահայտել չեմ կարող, ողորմած տեր. թմփլիկ, փխրուն, կարմրիկ: Վերցնում ես մեկը, սատանան տանի, թաթախում ես տաք յուղի մեջ, ուտում՝ մյուսն է մտնում բերանդ: Մանրամասները, նախշերն ու կոմենտարներն էին՝ թթվասերը, թարմ խավիարը, սալմոն ձուկը, ճմլած պանիրը: Գինին ու օղին՝ ծով: Բլիթներից հետո կերանք թառափե ձկնապուր, իսկ այնուհետև՝ սոուսով համեմված կաքավի միս: Այնքան կերանք, որ հայրս աննկատելիորեն արձակեց փորի վրա եղած կոճակները և, որպեսզի ոչ ոք չնկատի նրա այդ ազատամտությունը, ծածկվեց անձեռոցիկով: Ալեքսեյ Իվանիչը, որպես մեր պետը, որին ամեն բան թույլատրելի է, արձակեց ժիլետի և վերնաշապկի կոճակները: Ճաշից հետո, առանց տեղից վեր կենալու, ղեկավարության թույլտվությամբ սկսեցինք ծխել ու անցանք զրույցի: Մենք ունկնդրում էինք, իսկ նորին գերազանցությունը, Ալեքսեյ Իվանիչը, խոսում էր: Զրույցի բովանդակությունը մեծ մասամբ երգիծական բնույթի էր, բարեկենդանային... Պետը պատմում էր և, հավանաբար, ջանում էր թվալ սրամիտ մարդ: Չգիտեմ, թե նա որևէ ծիծաղելի բան ասա՞ց, միայն հիշում եմ, որ հայրս որոպեն մեկ բոթում էր կողքիս ու ասում.

— Ծիծաղի՛ր:

Ես բերանս լայն բաց արած, ծիծաղում էի: Մեկ անգամ նույնիսկ ծիծաղից ծղրտացի, գրավելով բոլորի ուշադրությունը:

— Այդպե՛ս, այդպե՛ս,— շշնջաց հայրս:— Ապրե՛ս: Նա քեզ է նայում ու ծիծաղում է... Դա լավ է. գուցե, իսկապես, քեզ նշանակի գրագրի օգնական:

— Այո-ոս,— ի միջի այլոց ասաց Կոզուլինը, մեր պետը, փնչալով ու հևալով: — Այժմ մենք բլիթ ենք ուտում, թարմագույն խավիար գործածում, մեր սպիտակամարմին կնոջն ենք փաղաքշում: Իսկ իմ աղջիկներն այն աստիճան գեղեցիկ են, որ ոչ միայն ձեր դասակարգի խոնարհ մարդիկ, այլ

նույնիսկ իշխաններ ու կոմսեր ակնապիշ նայում են նրանց ու հառաչում: Հապա բնակարա՞նս: Հե՜-հե՜-հե՜... Հենց այդ է բանը: Մի տրտնջացեք, մի գանգատվեք նաև դուք, քանի դեռ մինչև ձեր կյանքի վերջը չեք ապրել: Ամեն բան պատահում է, ամեն տեսակ փոփոխություններ էլ լինում են... Դու այժմ, ասենք, ոչնչություն ես, զրո, մի աննշան փոշի... չամչի հատիկ, բայց ի՞նչ իմանաս՝ մեկ էլ տեսար իր ժամանակին. . . մարդկանց բախտի քանքուլից բռնեցիր: Ամեն բան էլ պատահում է:

Ալեքսեյ Իվանիչը մի պահ լռեց, շարժեց գլուխն ու շարունակեց.

— Իսկ առաջ, առաջ ի՜նչ էր: Հը՞: Աստվա՜ծ իմ: Հիշողությանդ չես հավատում: Առանց սապոգների, պատառոտված շալվարով, ահ ու դողով. . . Պատահում էր, որ մեկ ռուբլով երկու շաբաթ աշխատում էիր: Էդ ռուբլին էլ ձեռքդ չէին տալիս, ոչ, այլ ճմռթում էին ու երեսիդ խփում՝ խժռի՜ր: Եվ ամեն մի պատահած մարդ քեզ կարող էր ճզմել, խոցել, կացնի բութ կողմով գլխիդ հասցնել... Պատահողը կարող է վիրավորել... Գնում ես զեկուցում տալու, մեկ էլ տեսար՝ դռան առջև շնիկ է նստած: Մոտենում ես այդ շնիկին ու բռնում թաթիկը: Այսինքն՝ ներեցեք, որ ձեր կողքով անցա: Բարի լույս: Իսկ շնիկը վրադ գռմռում է... Շվեյցարը թևով բոթում է կողքիդ, իսկ դու թե՝ «մանր դրամ չունեմ, Իվան Պոտապիչ... ներեցե՛ք»: Իսկ ամենից շատ սև օրեր եմ տեսել ու նախատինք կերել ահա այդ ապխտած սալմոնից, ահա այդ... կոկորդիլոսից: Ահա հենց այդ հեզ ու խոնարհ Կուրիցինից:

Եվ Ալեքսեյ Իվանիչը մատնացույց արավ իմ հոր կողքին նստած կարճահասակ, կոր մեջքով մի ծերուկի: Վերջինս ճպճպացնում էր հոգնած աչքերը և տհաճությամբ սիգար ծխում: Սովորաբար նա երբեք չի ծխում, բայց երբ ղեկավար անձը նրան սիգար է առաջարկում, ապա նա հրաժարվելը համարում է անվայելուչ: Նկատելով իրեն ուղղված մատը, նա սաստիկ շփոթվեց ու աթոռի վրա պտույտ եկավ:

— Շատ եմ տանջվել այդ հեզ ու խոնարհ մարդու երեսից,— շարունակեց Կոզուլինը: — Առաջին անգամ ես նրա ձեռքն ընկա: Բերեցին ինձ՝ կորած-մոլորած, խեղճ ու կրակիս ու նստեցրին նրա սեղանի առաջ: Ու այդ օրվանից սկսեց նա հոգիս ուտել... Ամեն մի խոսքը՝ սուր դանակ էր, ամեն մի նայվածքը՝ սրտիս մեջ խրվող գնդակ: Այժմ նա դարձել է մի ողորմելի ճիճու, թշվառականի մեկը, իսկ առաջ տեսնեիք, թե ինչ էր: Մի կատարյալ Նեպտուն: Երկինքը տակն ու վրա էր անում: Երկար ժամանակ ինձ տանջեց: Ես ամեն մի ծառայություն մատուցում էի նրան. և՛ գիր անում, և կարկանդակներ էի վազեվազ բերում, գրչածայրերն էի սրում, պառավ զոքանչին թատրոններն ուղեկցում: Մի խոսքով՝ ամեն տեսակ հաճոյակատարություն: Նույնիսկ սովորեցի քթախոտ քաշել: Այո՛. . . Եվ բոլորն ի հաճույս նրա... Մտածում եմ՝ չի կարելի, որ տուփը միշտ մոտս չլինի, հանկարծ քթախոտ կպահանջի: Հիշո՞ւմ ես, Կուրիցին: Մի օր նրա մոտ է գալիս հանգուցյալ մայրս. խեղճ պառավը խնդրում է, որ նա իր որդուն, այսինքն ինձ, երկու օրով թույլ տա գնալու մորաքրոջս մոտ՝ ժառանգությունը բաժանելու համար: Տեսնեիք, թե ինչպես հարձակվեց մորս վրա, ինչպես չռեց աչքերն ու գոռաց. «Բայց նա թամբալի ու ձրիակերի մեկն է, ի՞նչ տղա ես մեծացրել, հիմար պառավ... Դատի կտամ»: Գնաց պառավ մայրս տուն ու անկողին ընկավ, վախից հիվանդացավ, քիչ մնաց մեռներ...

Ալեքսեյ Իվանիչը թաշկինակով սրբեց աչքերն ու մի շնչով պարպեց գինու բաժակը:

— Ուզում էր իր աղջկա հետ ամուսնացնել, բայց ես այդ օրերին... բարեբախտաբար ջերմախտով հիվանդացա, վեց ամիս հիվանդանոցում պառկեցի: Ահա թե ինչեր էին կատարվում: Ահա թե ինչպես էինք ապրում: Իսկ ա՞յժմ: Փո՜ւ: Այժմ ե՛ս... ես եմ նրա գլխին: Նա է իմ զոքանչին թատրոններ տանում, նա՛ է ինձ տուփը մատուցում և ահա սիգար է ծխում: Հե՜-հե՜-հե՜. . . Ես նրա օրը պղպեղով եմ համեմում... պղպեղո՜վ: Կո՜ւրիցին:

— Ի՞նչ եք հրամայում,— հարցրեց Կուրիցինը, ոտքի ելնելով ու լարի պես ձգվելով:

— Ողբերգություն ներկայացրու:

— Լսո՜ւմ եմ:

Կուրիցինը ձիգ կանգնեց, խոժոռվեց, ձեռքը պարզեց վեր, դեմքը ծամածռեց ու խռպոտ, կերկերուն ձայնով ծոր տվեց.

— Մեռի՜ր, ուխտադրուժ կին: Ծարա՜վ եմ արյան:

Մենք ծիծաղից թուլացանք:

— Կուրիցին, այս հացի կտորը կեր պղպեղով:

Կուշտ Կուրիցինը վերցրեց մի մեծ կտոր հաճարե հաց, համեմեց պղպեղով ու մեր բարձրաձայն ծիծաղի տակ՝ սկսեց ծամել:

— Հաստատուն ոչինչ չկա,— շարունակեց Կոզուլինը:— Նստի՛ր, Կուրիցին: Երբ ոտքի ելնենք՝ մի բան կերգես... Այն ժամանակ դու էիր, իսկ այժմ՝ ես... Այո՛. . . Այնպես էլ մեռավ պառավս. . . Այո՛…

Կոզուլինը ոտքի ելավ ու երերաց…

— Իսկ ես լռում էի, քանզի մանր, ողորմելի մարդ էի… Հոգեառնե՛ր... Բարբարոսնե՛ր...Իսկ այժմ ես... Հե՛-հե՛-հե՛.. . Ապա դո՛ւ: Դո՛ւ: Քե՛զ եմ ասում, անբեղ արարած:

Եվ Կոզուլինը մատն ուղղեց հորս կողմը:

— Վազի՛ր սեղանի շուրջն ու աքլորի պես կանչիր:

Հայրս ժպտաց, ախորժելի կերպով շիկնեց ու սեղանի շուրջն սկսեց տնկտնկալ: Ես հետևեցի նրան:

— Ծուղրուղրու-ղո՛ւ,— բարձր ձայնեցինք մենք ու վազեցինք ավելի արագ:

Ես վազում էի ու մտածում:

«Կդառնա՛մ գրագրի օգնական»:

1883